



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

20 ապրիլի 2020 թվականի N 130 -Ա

ՍՈՒՐԵՆ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱԺԻ ԱՎԱԳ ՀԱՇՎԱՊԱՀԻ (97-1.1-Մ3-2) ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշմամբ հաստատված կարգի 151-րդ կետով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի ավագ հաշվապահի (ծածկագիր՝ 97-1.1-Մ3-2) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հարցազրույց անցկացնող հանձնաժողովի 2020 թվականի ապրիլի 16-ի եզրակացությունը և Ս.Ոսկանյանի դիմումը՝


հ ր ա մ ա յ ու մ եմ.

1. 2020թվականի ապրիլի 20-ից Սուրեն Ոսկանյանին նշանակել ՀՀ Սյունիքի մարզպետարանի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի ավագ հաշվապահի (ծածկագիր՝ 97-1.1-Մ3-2) պաշտոնում՝ 9 ամիս փորձաշրջանով:

2.Սուրեն Ոսկանյանի փորձաշրջանի համակարգող նշանակել մարզպետարանի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ (ծածկագիր՝ 97-1.1-Ղ5-1) Մարինե Աբգարյանին:

3. Աշխատավարձը՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով:

4/20/2020



ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

2020թ. ապրիլի 20
ք. Կապան